


ՏՐԻ ԵՒ ՏՆՈՐԷՆ

ՅՆ ԲՈՒՐՈՍԵ ԱՆ

Նամակ կամ որ եւ է
զրու թիւն պէտք է ուղղել առ
Տնօրին ԱՐՇԱՒԱՅՍ քաղաքի
ԳԱՀԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱՍՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏ ՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դանկն	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ	12

F. TOROSSIAN
Diréc. propr. du journal arménien
ARCHALOUYOS
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՍՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Եւ թղթատարի ծախքը
Խոնարարութեան վրայ է :


Խոնարարութեան ուղղութեամբ
գրութիւնք եւ չ'են տրուիր

Ա.ՉԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ
Կանխիկ վճարելի են

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

ԵՒ ԲԱԶՄԱՎԵՊ

« Ubi bene, ibi patria »



Քաղաքացիական թերթերը քիչ անգամ
կ'ընդհանրեն « Բազմավէպ » ու կ'ըստ քիչ բա-
ցաւորութեամբ, մտաւորականները ակնարկ
մը ձգել կը հաճին կամ համարձակին . . .
այդ կիսագարեան հանդիսին վրայ ու այս
մտաւորութեամբ այնքան պայանելի է որքան ու-
րանալը անոր պատկանած վանքին հեղինակ-
կաւոր գրութիւնները . . . Կ'արժէր սա-
կայն որ արտասահմանի թերթերում հետ մեր
սեղանի ընկեր ու բարեկամ ըլլար « Բազ-
մավէպ » ր մանաւանդ հիմա, նոր ուղղու-
թեամբ մը այնքան համակրելի և սիրելի :
Պատկաւելի անուններ Սիւրբան և ուրիշներ,
պատմական և հնարասական ուսումնասիրու-
թիւններով կը լեցնեն զայն, կորսուած
« գրախօսին » աղբու յիշատակները արթնցնե-
լով մեր, ըսեմ քարացած սրտերուն մէջ .
ու ասոնց քով վճիտ ու մաքուր աշխարհա-
բառով մը, նոր գրիչներ կը շոշափեն ըն-
կերական ու ազգային ամենափափուկ հար-
ցեր, անկեղծ ու անշահախնդիր մենակեա-
ցի դատաստաններով համեմուած : Յանձ-
նարարելի հանդէս մը վերջապէս, որուն
նուազագոյն օգտակարութիւնն է, պահ մը
մտաւորով մեր շատ մը թերթերու բանա-
կոնքներու տպաւորութեան, ու ասիկա քիչ
բան չ'է կարծեմ . . .

Ապահովարար սակայն « Բազմավէպ » ի
նոր գրողներու շարքին մէջ, Հայր Երեմ-
եանն է որ գուրս կը ցայտէ իբր տիրական
պետը Վենետիկ կաճառին նոր շարժման .
գրեթէ ամեն պրակի մէջ պիտի տեսնաք իր
սահուն ու գուղարիկ խմբագրականները,
ազգային գլխաւոր ցաւերուն ու վէրքերուն
նուիրուած, խոհեմ ու շրջապէսաց գըր-
նուածքներ, ուղղիչ չ'զարնելու մեր ժան-
գատած ու աւելի կամ նուազ մուկեանդ
թեւերուն և այնքան փափկութեամբ, որ
զվարճացուցիչ զեփեռուի մը պէս կ'անցնին սըր-
տիդ ու մաքիդ վրայէն, և համեմատ մեր
է'ն ըմբոստ մտքերուն, բողոքելու բնական
ձգտումը մեղսելու աստիճան :

Այս առթիւ պատեհութիւն կ'ունենամ
խօսելու իր վերջին խմբագրականին վրայ,
որը մասնաւորաբար մեզ եգիպտահայցս
հետ առնչութիւն ունի, և եթէ ինչ ինչ
կէտերու մէջ համայն չը գտնուիմ Հայր

Երեմեանին հետ, անշուշտ ներգամուտ-
թեան կ'արժանանամ :

Կ'ակնարկեմ « Բազմավէպ » ի փետրվա-
րի պրակին, որուն մէջ յիշեալ Հայրը իր
պատմաբանի ու իմաստասէրի պաշարով մեզ
կը զրկէ « Ու՛ր գաղթել » վեցնադրով ան-
հերքելի կերպով շահեկան խմբագրական
մը . պիտի փափաքէի ամբողջ այդ շօքուա-
ծը հոս արտագրել, գաղափար մը տալու
համար իր խորհրդածութիւններուն ու ոճին
վրայ, եթէ լրագրոյս նեղ սիւնակները խը-
նայել չ'ուզէի . կը բաւականանամ միայն
հոս ամփոփել կարճ բառերով և անցնիլ
ըսելիքներու :

Հայ գաղթականութեան տխուր պատ-
մութիւնն է ասիկա, և կ'սկսի 1605 թուին
հին Զուղայի հայ գաղութին սրտայոյլ ու
վսեմ պատկերովը « հալածանք », աքսոր կ'ո-
րոտան կ'պաշտեն արեւմտեայ գլխուն,
Պարսիկ սուրը անդթաբար կը ներգործէ .
Զուղայի Հայք կարող չ'են գիմարել թըշ-
նամուցն գժոխային զօրութեան, պէտք է
տարածութեալ գնալ դէպի օտար աշխարհ,
միտրապաշտից բնապաւուն . հարստութիւն-
նին կը թաղեն գետնի տակ, կը գոցեն և
կեղեցիներու դռները, կը դիզուին Աստուա-
ծածանայ եկեղեցւոյ առջև ու խոր խոցուած
կ'աղբրեն, « Գեղ կը յանձնենք, ո՛վ Ս .
կոյս, մեր տաճարներու և աներու բանա-
լիները . դու զմեզ օտարութենէն մեր հայ-
րենիքը գարձուր » . և բանալիները Երասի
գետի հեծող ու մռնչող ալեաց տալով, կը
հեռանան . անոնց ետեւէն կը համախի տաճա-
րաց ու տնակաց ժուկն ու միսիքը . և այդ
տխուր ամպերուն մէջէն կ'որոտայ ձայն մը .

« Մասիսի անուն, նոյայ տապանին,
Արարատայ դաշտի, Սուրբ Էջմիածնի,
Մեր խոր վիրապի, Սուր գեղարդ,
Մուկնի,
Չ'մոռնան մինչ ի օրն դատաստանի » :

Ու յաջորդաբար, թուականի կարողով
կը պատկերենայ մեզի հայ գաղութներու
անցեալին, համառօտ ուրուականները « հա-
լածանք և աղքատութիւն . . . , շահասիրու-
թիւն և դիւրակեցութիւն » ահա՛ մեծ պատ-
ճառները . և այսօր Պարսիկը վազը Աքաբը,
յաջորդաբար կը մերկացնեն Հայաստանը,
քնելով գժաղդ ժողովուրդը Պարսկաստա-
նի խորերը, Ասորեստան, Արաբիա, Եգիպ-
տոս և Պաղեստին . միւս կողմէն, ապրելու
պէտքը, զանոնք կը մղէ դէպի Բիւզան-
դիոն և անկէց « Թրակիա », Թեսաղիայէն
Մակեդոնիա, Կիպրոսէն Հոգոս . կրետէն
մինչև Անդրիականի փոփոխքը . . . գէպի հի-
սիս կամ արևելք . « Երբի՛մ, Թէնդոսիայէն

Մարտաիա, Լեհաստան, և Ռուսիան, և
Պարսկաստանէն Հնդկաստան » : Մեծ դէ՛մ-
քեր ու մեծ գործեր կուգան սփոփել ա-
նէ՛ծ քի այդ օրերը, յիշատակներ անթաւամ,
որոնք պահ մը մոռցնել կուտան անմոռա-
նային . Լազարեան և ուրիշներ պահապան
հրեշտակներ կ'ըլլան ցրուած հօտին, ու ի-
բուամբ կ'արժանանան սա տողերուն « խա-
ւար դարերու և աննշան ու յետամնաց աղ-
դաց մէջ, հին հայ գաղութը կը պարծէր
իր բնատուր ձիւքերով, որոնք ուշագրաւ
կ'ըլլային այն ամեն աէրութեանց, որոնց
հպատակ էին : Հայ գաղութը ի՞նչ մեծ վա-
ճառականներով օգտակար եղաւ Պարսիկին .
քաջարի և անձնաւոր զօրավարներով՝
Ռուսին . Ամիրաներով՝ Թուրքին « Մեր պատ-
մութեան անցեալ շրջանին՝ հայրութեան ար-
ժանաւոր անդամները, պետական մարմին-
ներ կը կազմէին, որոնց կայծերը ներկա-
յիս Շահերու արքունեաց մէջ կը պլպլան-
Անոնք ազգայնութեան վրայ ունէին իրենց
բարոյական և նիւթական մեծ թիփուէնքը,
որոնց նուազութիւնը յայտնի էր, որ ազգիս
համար միսիթարական չ'էր » :

ՅԱԿՈՔ ՓԱՓՈՋԵԱՆ
(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷԷՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՐԻՆ

Մեր մէջ ընդհանրապէս սա համոզումը կը
տիրէ թէ մէկը հայերս գծրճանական մարդիկ
չ'ենք, ձեռներէց սգին կը պակսի մեզ : Այս հա-
մոզումը աւելի կը չեչտուի, երբ խնդրը ու-
սուցչաց վրայ դառնայ :

Սակայն ուրախ ենք ըսելու թէ մերթ ընդ
մերթ երեւան կ'ելնին մեր մէջ անհատներ, ո-
րոնք իրենց բանիմաց գործունէութեամբ ու
ձեռներէց ոգիովը ասկաւ կը խախտեն այդ յո-
սի համոզումը : Ահա նախկին ուսուցիչ մ'է որ
ամենայն ճարտարութեամբ կը վարէ քաղաքիս
ամենէն պատուաւոր պրոֆեսորին վրայ գտնը-
ուած մեծ սրճարան մը :

Գառնիկ է՞ք . Սիրունեան տասնեւհինգ տա-
րի ուսուցչութեան մէջ արդիւն ուսը կերպով
յարատեւելէն յետոյ այդ տպաւոր տապալէ-
զին անկայուն և յարափոփոխ վիճակէն վա-
սած խպառ կը չ'ըստարի ուսուցչական պաշ-
տօնէն . և ուրիշ տապալէզ մը կ'ընդգրկէ : Ա-
հա այսպէս երկուան վերացական մարդը եղած
է այժմ գործնական մէկը :

Ասկէց չ'որս ամիս առաջ ո՛վ կը հուսուար
թէ այդ նախկին ուսուցիչը կարող պիտի ըլլայ
այսքան ճարտար ու կանոնաւոր կերպով բա-

նեղնել կրան Գափե Շիշու ի այդ հանրամասնով

Գառնիկ էֆ. Սիրուհեան տնա այն ձեռնե-

Կանոնաւոր սպասարկութեան, ֆունկցիոն-

Հոն յաճախողը կը դանկ Հաճի Պէթրի յո-

Մեր ըսածին համոզուելու համար կը բաւէ

Կարճ ժամանակի մը մէջ եղած ա'յնքան

Մեզ կը մնայ ուրեմն քաջալերել այդ հո-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

« ԳԻՏԵՐ ՄԸ » ԵՆԸՆԸՅԻ ՊԱՆՍԻՆ ՄԷՋ

Սգալի մուծը պտտած էր ամբողջ տիեզեր-

Բնութիւնը վրէժխնդիր կը գտար անգա-

Ամպերը սոփոյն խուժելով կ'շտապէին

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

ԱՅԵՂԱԿՈՒԿ ԱՂՁԻԿ ՄԸ. — Այս օրե-

Պր. Մուշի՝ զեղադործ, խիստ զբաղած

— Պարսն, հատ մըն ալ կ'զգամ թե-

Եւ զեղադործը կ'ստիպուի առանց ժա-

Պր. Մուշի մինչև հիմա 120 հատ ա-

Օր. Ժիւլիէն Լանտրիէօ — այս է ազ-

11 տարեկան եղած ամենա, ընկերու-

Օր. Լանտրիէօ Մէն-Ժէրմէն-ան-Լէյցի

Թ'անի աշխատակիցներէն մին դայած

— Երբեմն արդարեւ կը պատահի որ

Անդին... թշուառ ստապեալ հոգիներու

Սգաւոր ու վրէժխնդիր բնութիւնը ան-

«Ա'հ Պոսֆօր, անդ՝ Պոսֆօր... ցոյց սուր

ցափ կը ճամբարէ մկաններուն մէջ-տե-

Գալով այդ Մէն-Ժէրմէնի գէղքին՝ բա-

Ինչ որ ալ ըլլայ այդ ասեղակուլ և

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՏԻՎԸ. — Ն. Բարձրութիւն, Խտիվը

Հաւասար գործակալութեան մէկ հեռա-

ՏԻՒՄՆ ՓԱՏԱ. — Ն. Վեհափայտ Տիւր-

ՄԵՆԱՄԱՐՏ. — «Բիրամիտի» Խմբագրա-

«Ա'հ լուս ես դաժան լուս... քայց ես

Վերը Պոսֆօրի խորհրդաւոր բլրերին մար-

«Բիրամիտ» ի Աղէքսանդրիոյ լի վթակիցը առջի օրը հետեւեալ հեռագիրը զրկած է:

«Հանդիպումը այս առաւօտ անդի ունեցաւ ժամը 9ին. ընտրուած զէնքը սուրն էր: Պ. Յօլ Մանսի վկաներն էին Պ. Էսթրօմբէյ և Պ. Բրէնսիլը՝ իսկ իր հակառակորդները Պ. Պ. Մարիօ Փօլուչի և Փանիվէ: Մենազարար 20 վայրկեան տևեց, 5րդ վերակաման Պ. Մանս նախաբազուկէն վիրաւորուեցաւ:»

Պ. Մանսի վէրքը թէև երկար ու խորունկ է, բայց և այնպէս վիճակը կարելի եղածին չափ գոհացուցիչ է. Խմբագրապետը հինգշաբթի իրիկուն Իահիրէ գարձած է:

Ահաւասիկ առանց միջամտողներու երկար ու բարակ խորհրդածութեանց և ձգձգումներուն, ո՛ր և է ինդիւր կարգադրելու ամենակարճ ու կտրուկ միջոցը. հայերը այս գովելի և պատուաւոր դրութիւնը դեռ ընդունած չեն և յաճախ կը պատահի որ պէրպէսիններու նման փողոցներուն մէջ կը գզուրախն և սատիկանի մը միջոցաւ Թօմը կառաջնորդուին:

Այս վերջինը պատուաբեր չէ. պէտք է որ Մենամարտի գպրոց մ'ալ ունենանք, մեր Գաղստան վարժարանը բարեկարգ վիճակի մը մէջ դնելի յետոյ:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Ս. Բէթէրպուրի 23 ապրիլ. — Ռուսական բանակ մը, որ 35,000 հոգիէ կը բաղկանայ, հրաման ստացած է Թուրքիստանի սահմանազրուելը երթալ, այն անդի խումբերը զօրացնելու համար:

Հոռվմ. 23 ապրիլ. — Ճէնովայի Դուքը՝ Թագաւորին և նախարարաց իր պատուիրակութեան հաշիւը սուսած միջոցին Պ. Լուպէյի մասին շատ մը գովեստներ ըրած եւ իր սքանչալուցումը յայտնած է իր ընդունած սիրազեղ ընդունելութեանց համար:

Փարիզ 23 ապրիլ. — Տաճկական զեպպնը երկար տեսակցութիւն մը ունեցած է Արաքիին գործոց նախարարութեան քարտուղարին հետ: Այս տեսակցութեան միջոցին կարգադրած են ոճրագործներուն երկրահանութեան (extradition) այսինքն յանցաւորը իր աէրութեան յանձնելու խնդիրը:

մենակեացը, դաժան սանդարամետեան ճիւղը, զեւերու լեզէնին Պատուոյ ասպետը արիւնկըզակ... գիշապիչ ներոնը, մարդախոշոջ Տուրքիլը, արիւնխանն գալլի մը պէս կը հրճուէր արթուն... գրուած բուերը կը վայէին... ու մուրը կը թագաւորէր:

Վայրկեաններ, ժամեր կը սահէին կ'անցնէին ու գործը վրէժխնդիր բնութիւնը անպրօքելի կը գոռար միշտ. ներոն յողնած էր ու քունէն յաղթուած... երկնցած էր նա անկողնոյ վրայ՝ այն անկողնոյն՝ որ դեռ արիւն կը հոտէր եւ որու յատակը կ'մախքներով լի խորխորատ մը բացուած էր: Փլուելը բարձին կըրթընցուցած, այն բարձին՝ որ ոճիրներու շարաշուք խորհուրդներով լըրճուած էր... կը քնանար. ամեն ինչ լուս էր միայն բնութիւնն էր որ կը գոռար... եւ անա յանկարծ դժոխքի դուռը բացուեցաւ իւր ամեն արհաւիրքներով. կ'մախքներով վեր բարձրացան սարտամ... տատամտոս... Եւ ճիշդակ Նորաստիքներ հագած, կարկամեալ չոր ձեռքերնին դէպի յառաջ երկնցուցած, կամաց կամաց կը յառաջանային... խորը դեւերը արիւնէ վերարկուներու մէջ պլուսած կը պարէին... ուրուականները բոցերու մէջէն հրամբած՝ մահուան տխուր երգը կ'երգէին անգագար. սղիները աժդոյն կը ձայնակցէին տոնոց... կ'մախքները կը յառաջանային միշտ դեւերէ շրջապատուած ու անէձքի շրջեղծ մը կը

Եւրոպայի միւս օսմանեան ներկայացուցիչներն ալ նմանօրինակ գիտութիւններ պիտի ընեն կատարութեանց, նոյնպիսի գոհացում մը ստանալու համար:

Կ. Պօլիս 23 ապրիլ. — Պուլկար գործակատարը ազգուօրէն բողոքած է Պուլկար Մեդրոպոլիտ Սթրօմիցայի ձերբակալութեան դէմ եւ պնդած է որ անոր քով բռնուած վաւերագրերը հաստատուին. որովհետեւ այդ թղթերը ո՛ր և է քաղաքական նշանակութիւն չ'ունին և միայն կը վերաբերին Սթրօմիցայի եպիսկոպոսութեան ժողովրդին գործերուն:

Հոռվմ. 25 ապրիլ. — Երկուշաբթի ցընցում մը զգացուած է Հոռմէական գաղտին մէջ:

Լոնտոն 25 ապրիլ. — Պօէրները կը շարունակեն գործել Բարի մէջ, Կոխները տեղի ունեցած են կրաթ Թէյնթի, Սթէյպլերի, և Պաքի մէջ:

ՎԵՐՋԻՆ ՄԻՋՈՑ

Հետեւեալ նամակը նոյնութեամբ կը հրատարակենք մտաւոր ապագայի մէջ անոր վրայ ընդարձակ խորհրդածութիւններ ընելու համար:

Տիար Եղիշէ Թորոսեան
Տնօրէն « Արշալոյս » Թերթի
Առա

Այսօր 11 եւ աւելի ամիսներ անցած են եւ հակառակ իմ կրկնակի պահանջներուս դեռ անվճար թողուցած էք իմ հաշիւս, որուն մանրամասնօրէն ցուցակը ներփակեալ պատիւն ունիմ Ձեզ ուղարկելու:

Այլ եւս չ'եմ ընդունիր որ շարունակէք օգտուել իմ թոյլտուութենէս, եւ վերջին անգամ ըլլալով կը շնորհեմ Ձեզ երկու օր. այդ ժամանակամիջոցին եթէ չ'կարգադրէք այն հաշիւը կը ցուսիմ ազգարարելու թէ զիս՝ արգարութեան դիմելու հարկին մէջ գրած պիտի ըլլաք:

Ընդունելիցէք յարգանքներս

Ս. Ս. Փափաղեան

ՀԱՇՎՈՒՄՈՒՑԱԿ

« Արշալոյս » թ Տնօրէն Տ. Եղիշէ Թորոսեան և Տ. Դարբինեանի միջեւ ծագած անհամաձայնութեան կարգադրութեանը առթիւ խորհրդակցութիւն պայմանագրի վրայ. 200

Հաշուեքնութիւն և ըստ պահանջներու Թորոսեանի 500

Ընդ ամենը ձօժը հարիւր դան. կգ. ողջ Գահիրէ 22 Ապրիլ 1901

Կնիք

ժայթքէին: Ներոն աչքերը բացաւ. զգաճալին շարժուեմով մը ու գոխային քրքիչով մը « երեւակայութիւն, ցնճճ » պօսաց:

Ինչ յետոյ սենեակին դուռը ծանր, շատ ծանր բացուեցաւ. ու դրան առջեւ կրեցաւ փոքրիկ աղջիկ մը գեղազէմ, զուարթ աչքերով. դաժանն ներոն աճգոյն դէպի անոր յաւեց իւր անքուն՝ բորենիի աչքերը. վայրենի նայուածք մը նետեց դէպի հոն, որու յաջորդեցին սաւրճանակի երկու սոսկալի պայթիւններ. փոքրիկ մանկիկը դրանը առջեւ արիւնշաղափս փռուած էր... ճիւղ ներոնի զուակը սպաննուած էր իւր հօրը ձեռքով. որդեկանքը անպատիժ կը կը մնար...:

Մինակ անակի գիշերն էր որ իւր վրէժը կը լուծէր...:

Դուրսը անողոք բնութիւնը կը գոռար միշտ... ու արցունքի կաթիլները շուս շուս կ'իջնէին վերէն... երազները արտուր կը ցրուէին դէպի հոն, ուր վիշտը գոյութիւն չ'ունի... սգիները կը սաւառնէին տիեզերքի վրայ տանկով իրենց հետ անէձքներու կատրակ. լուսութիւնը կը տիրապետէր... մինակ բնութիւնն էր որ անդրգոտի կը գոռար միշտ...:

ԱՐՏԱՇԷՍ ՄՍՐԼԵԱՆ

Հելուան 18 ապրիլ

Պ. Ս. Փափաղեան գեռ. քանի մը օր առաջ « Իշերային Դասախօսութիւններ » պիտի հաստատուի բնելով, հայ թէ օտարազգի մարդկեան շնորհակալութիւնը յարաւար գործածելի և օգին մէջ հաստատելի գիշերային դասախօսութեանց ի նպաստ, լարախաղացութենէ արտադրուած գումարը աներեւութացնելէ վերջ, այս նոր միջոցը մտածած է, եթէ յաջողի:

Իր նոր և անխորհուրդ միջոցին ինչ ըլլալը գիտնալու համար, բաւական է ուշադրութեամբ կարգաւ ի վերի հրատարակուած նամակը, որուն մէջ գտնուած անհշտարիւնք և իրուարսանութենէ ու տրանսպանութենէ բարձրովին զօրի վիճակը, անգամը ևս կուգան անժխտելի կերպով հաստատել Պ. Ս. Փափաղեանի մտաւորական և քարոյշային փիճակը:

Բնական է որ այս խնդրոյն վրայէն այսչափ հարեւանդի չ'պիտի անցնինք, երբ Պ. Փաստաբանը՝ գէթ մեր զբաղումները կրկնապատկելու համար — միակ նպատակը այդ եղած լինելու է — իր դատարան դիմելու սպաննալիքը գործադրէ:

Դատարանական գործադրութիւնները աւարտելէ վերջ, այս և ուրիշ ատոր նմանող խնդիրներու վրայ պիտի դրենք:

ՈՒՂՂԵԼԻ

Անցեալ 171 թուոյն Ա. Երես երկրորդ սինակին վերէն հաշուելով, 12 րդ. տողէն « իր 15 դարեան անմահ եւ անքիժ փառքով՝ պիտի հովանաւորուի Բարձր. Իշխան Լուսինեանի անունով » պէտք է կարգաւ « իր 15 դարեան անմահ եւ անքիժ փառքով ժաւոք, Բարձր. Իշխան Լուսինեանի անունով պիտի հովանաւորուի »:

ԳՈՐԾԱՒՈՐՈՒՄԻ ԿՈՒՋՈՒԻ

Դերձակուհի Տիկին Է. Ա. Ասլանեանի Արքիէին համար գործաւորութիւններու պէտքը կայ. փափաքողք կրնան դիմել իրեն բնակարանը ի Պապ-էլ-Լուք Հէլուանի կալարանին անկիւնը:

ՆԱՄԱԿ ՓԱՐԻՋԷՆ

Փարիզ 8 Ապրիլ 1901
Պ. A. SAISSY Ի ԹԱՂՈՒՄԸ

(Շարունակութիւն նախորդ քիւն եւ վերջ)

Լատինական եկեղեցւոյն Սուրբ Շաբաթին մէջ գտնուելով անկարելի էր ուրբաթ օրը թաղել — Աւագ ուրբաթ լինելով — Աւտի թաղման հանգէտը կատարուեցաւ շարաթ օրը ճիշտ կէս օրին:

Կէս օրին, ու զիջ ժամը 12 ին հետիտուն զօրաց ջոկատի մը թմբուկներն սկսան դրդալ շատ տխուր — Պատուոյ Լէզէտնի անգամ լինելուն, ջոկատ մը՝ զինուորական պատիւ կ'ընէր հոնգուցելոյն — նոյն միջոցին լսուեցաւ հրամանատարին կարճ խօսքերը. « Portez Arme! — Presentez Arme!... » Հանդուցելոյն մարմինը կառքի մէջ կը գրուէր եկեղեցի տանելու: Տխրալուր թմբուկները միշտ կը դրդալին երբ մենք արդէն հեռացանք հետեւեալ կարգով. նախ՝ դագաղակի, կառքը, որուն կը հետեւէին անմիջապէս Մէտի ընտանիքին բաղմաթիւ անգամները. ասանցիկ յետոյ Paris — Nouvelles գործակալութեանս բարձր Խրմ:

Լազարյանը իրենց պարագլուխ ունենալով Հայերէնի ճիւղին խմբագիրը — իր ամենահինը գործակալութեան մէջ և իր ամենհիմնարկուններէն — սրուն ալ ու ձախ կողմերը կը գտնուէին գործակալութեան ընդհանուր քարտուղարն և Պր. Սէսի անձնական գրագիրն : Խմբագիրներէն յետոյ կուգային Բարիկի պաշտօնական հաստատութեանց պատգամաւորները և ներկայացուցիչները, մինիստրական, պաշտօնական անձնաւորութիւնները, ասոնց մէջ կը գտնուէին բոլոր մինիստրներու ներկայացուցիչները, Նախագահի, Սենեկի և Մերակոյտի նախագահներու ներկայացուցիչները ևն. ևն :

Յետոյ կուգային թերթերու ներկայացուցիչները, խմբագիրներ, գրողներ, բարեկամներ, բազմաթիւ երեսփոխաններ, ծերակուտակներ :

Եկեղեցական արարողութիւնը տեւեց մօտ 3 1/2 ժամ, յետոյ մարմինը տեղափոխուեցաւ, այն կարգով և այնպիսի բազմաթեան հին Նէօյլի գերեզմանատունը :

Բազմաթիւ պատկեր կը զարդարէին պազազակիր կառքը, որոց մէջ սակայն ամենէն շատ աչքի իյնալու Paris-Nouvelles գործակալութեան Խմբագիրներուն գրածն էր, յետոյ Հասարակապետութեան Խմբագիրներու ընկերութեանը ևն :

Սարսափելի անձրևի մը տակ մինչև Նէօյի հասաւ յուղարկաւորութիւնը, ուր մարմինը հողին տակէ առաջ արտասանուեցան շորս ճառեր : Ճառախօսներն էին Պ. Լիւսիէն Վիկտոր-Մէժիէ՛ յանուն հասարակապետական և Բարլամենդարական խմբագիրներու ընկերութեան, յետոյ Պ. Կարթա, Պր. Ֆրանչիէ և Պր. Նէմուր-Կտորէ. ամենքն ալ յայտնի գրողներ :

Չ'մոռնանք բնել որ յուղարկաւորութեան ներկայ էին նաև Ճարճի, Սպանիայ, Իտալիոյ, Ամերիկայի (Մ-Ն), Շուէտի, Ռուսիոյ, Փորթուգալի, Աւստրիոյ, Պէլճիոյ, Հոլանտայի գեսպանները և կամ անոնց ներկայացուցիչները :

Յուղարկաւորութեան հանգէսը վերջացաւ երեկոյեան ժամը 4 1/2 — 5 ին :

Մեկիւր Ս. ԴԱԿԻՔ ԲԷԿ

ՍԱՍՈՒՆ ԵՒ ՁԷՅԹՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ — ՍԻՄՈՆ ՅԵԼԷԿԵԱՆԻ ԵՒ ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Բաւական ժամանակէ ի վեր տպագրութիւնը թէև աւարտած էր, սակայն ինչ ինչ սրածառներով հեղինակին կողմանէ վաճառման տեղը որոշուած չ'ըլլալով ծանուցումը յապաղեցինք. ուստի տպագրական պարտաւորութիւն կը համարինք այժմ ծանուցանել անոր աւարտումը այն ընթերցասէր ազգայնոց, որոնք կը սիրեն ազգու հայրենիք, և անոնց վերաբերեալ սրտազբաւ ողբերգութիւն մը :

Այն երկասիրութիւնէն քնել փափաքողք կրնան գիմել Հեղինակին, որ ամեն օր կէս օրէ վերջ ժամը 3 — 5 «Արշալոյս» խմբագրատունը կը գտնուի :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՅԻ ՄԻՉՈՒԱ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԻՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
 ԵՐԱՇՄԱՌՈՐԵԱԼ ԳՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 363 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահագրգիռները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ սրևէ ընկերութեանէ մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ Ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

ԳՈՐԾԱԿԱՆ Ի ՄՈՒՍԿԻ
 — ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ —

Ս Ի Ն Կ Ե Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ԵՆԲԱՑԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՔ

Պալատի փողոց. Խաղնտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ գիմայ, Գաթէ Տը Լա Պուրսի կից :

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԵՆԵՐՈՒ ԲՈՒՆՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն յուսադոյն կարի մեքենաները Մինչէ՛ր ներս են և. ասոնցմէ մինչև ցար. 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վիսյակներով և մեխանիզմով վարձատրուած, երաշխատուող ճեղքեաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՇ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ
 Փարիզի 1900 ի Տիեզերական արտեսանանդիսին մէջ ստացած է :

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵՐԻՆ
 ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՑ-ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
 ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ԱՅԻՎԱԿԱՆ ՏԱՆ


Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ Ի յաջակելին :

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Չրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճատորդաց տուններուն մէջ :

Վճարմանց Դիւրութիւն

Փոխանակութիւն ինչմեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից



ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՐԱԿԻ 21 ԱՊՐԻԼ 1901

8633	347	6088	3722	132	664
1529	1573	1583	1654	1865	2074
2443	2977	3206	3348	3423	3637
3861	4055	4584	4653	4859	5384
5691	5904	6442	6467	7202	8968

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԿ 26 ԱՊՐԻԼ 1901

2	9159	7162	9368	8924	291
4363	9576	2167	8544	8871	3370
3117	5857	9544	6303	8959	7912
1422	4414	3620	2353	601	9475
		4713	1493	7868	

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ **ԱՐՇԱԼՈՅՍԻ** ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՄՏԻԼ ԱՁԻՁԻ ՍԿԶԲԸ Օսկանիյի դեղատանին դիտացի փողոցին մէջ :

Փողոզրդական Տպարանին մէջ կը պատրաստուին : Այցեխարտեր, Երջարներահաններ, Գիւլեր, Հրաւիրագրեր, Մահագրներ, Տեղեկագրեր, Կանոնագրեր, Տոմսեր և այլ և այլ տպարանի լիբրարեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետեւեալ գրքերն : 1. ԲՆԱՇԻՍԱՐՀԻՒ ԲԱՌԱՐԱՆԻ Ա. և Բ. պրակներն : 2. ՈՐԲՈՒՆԻ որոյ ի Թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգիլուած է : 3. ՀԱՒԱՔԱԾՈՑ հայոց ժողովրդական երգերու :